



SERVICES CULTURE ÉDITIONS
RESSOURCES POUR
L'ÉDUCATION NATIONALE

Ce document a été numérisé par le CRDP de Bordeaux pour la
Base Nationale des Sujets d'Examens de l'enseignement professionnel.

Campagne 2012

BREVET DE TECHNICIEN SUPÉRIEUR

SESSION 2012

ÉPREUVE DE LANGUE VIVANTE ÉTRANGÈRE

GROUPE 1

ARMÉNIEN

Le candidat indiquera sur sa copie s'il compose en arménien oriental ou en arménien occidental.

Durée : 2 heures

SPÉCIALITÉS	Dictionnaires Autorisés	Coefficients
Assurance	Bilingue	1
Banque	Bilingue	1
Communication	Unilingue	2
Management des unités commerciales	Bilingue	1,5
Professions immobilières	Bilingue	1
Notariat	Bilingue	1

L'usage d'un dictionnaire bilingue est autorisé.

L'usage de la calculatrice est interdit.

Dès que le sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.

Le sujet se compose de 6 pages, numérotées de 1/6 à 6/6

ARMÉNIEN OCCIDENTAL

TEXTE

Համացանցի վրայ թուայնացում¹ հայերեն գիրքեր

[...] Ներկայիս տակալին հայերեն գրողներ կան, սակայն ընթերցողներուն թիւը զգալիօրէն նուազած է: Հակառակ որ տպագրական ճարտարարուեստը շատ կատարելագործուած է, հայերս բնաւ չենք օգտուիր այդ յառաջընթացէն: Շատեր աւելորդ կը նկատեն իրենց հայերեն գրութիւնները տպագրութեան յանձնել: Ընդհանրապէս լոյս տեսնող հայատառ գիրքի մը տպաքանակը 600-ի չի հասնիր ու անոնց մեծ մասը մատաններու մէջ կը փոխի: Եւրոպայի մէջ եւ Խաղաղական Ովկիանոսին անդիի ափին վրայ մատենասէր մարդիկ կան, որոնք սիրով պիտի ուզէին ձեռք բերել՝ Պէրուս, Հալէպ, Պոլիս եւ կամ Թեհրան լոյս տեսնող գիրքերը, սակայն անոնց ցանկերը չունին, առաքման ծախսերու պատճառով կը վարանին ապսպրելու:

Այս անելէն դուրս բերող միակ արահետը համացանցն է: Հեղինակը իր գիրքը կրնայ տեղադրել կայքէջքի մը վրայ եւ զայն մատչելի դարձնել բոլոր աշխարհամասերուն վրայ տարտղնուած ընթերցողներուն: Շատ փափաքելի է ունենալ կեդրոնացած կայք մը, որ յղումներ² պարունակէ դէպի տարբեր հայատառ ցանցային գրատունները: [...]

Ներկայ դարուս օտարալեզու թուայնացում գիրքերու թիւը կ'աճի ամէն օր՝ թէ՛ համացանցի մէջ, թէ՛ խտասալիկի³ վրայ: Այդ գիրքերը կարելի է կարդալ թէ՛ համակարգիչի պատտառէն⁴, թէ՛ մասնաւոր հպազգած տախտակներուն⁵ միջոցաւ որոնց տեսականին օրէ օր կը ճոխանայ (iPad, TachPad, Sony Dash, Archos...): [...]

Ֆրանսա քանի մը թուայնացում ցանցադարափ⁶ արդէն կը բանին Numilog (Hachette), Eden Livres (Flammarion, Gallimard...), ePlatform (Editis, Michelin...): Նորութիւն՝ համացանցի մեծ վաճառատունը, FNAC, Նոյեմբեր 15-ին հրապարակ կը հանէ իր ընթերցիչը⁷ FnacBook (կը վաճառուի 199 եւրոյի, ձրի 50 գիրքով): Իրենց կայքէն կարելի պիտի ըլլայ մօտ 80,000 թուայնացում գիրքեր գնել 20-30 տոկոսով աւելի աժան քան թուղթինը: Ըստ վերջին լուրերուն, Google համաձայնութիւն մըն է կնքեր Hachette-ի հետ՝ գրքեր թվայնացնելու համար:

¹ Թուայնացնել = numériser.

² Յղում = lien.

³ Խտասալիկ = cédérom.

⁴ Պատտառ = écran.

⁵ Հպազգած տախտակ = tablette tactile.

⁶ Ցանցադարափ = plateforme.

⁷ Ընթերցիչ = liseuse.

Այս վերի բոլորը նոր գիրքերու մասին է՝ անվճար կամ վճարովի: Անշուշտ պետք չէ անտեսել հին մատեանները: Նախ անհրաժեշտ է յիշեցնել թէ ամէն ոք իրաւունք չունի առանց հեղինակին արտօնութեան գիրք մը հրատարակել՝ թուղթի թէ լսատեսողական⁸ տարբերակը: Օրէնսդրութիւնը⁹ երկրէ երկիր կը տարբերի: Ֆրանսայի մէջ՝ հեղինակի մը մահէն 70 տարի ետք իր ստեղծագործութիւնները հասարակած ստացուածք¹⁰ կ'ըլլան: Ներկայիս շատ մը կայքեր կը բանին ուր կարելի է գտնել հպահանուած¹¹ կամ թուայնացուած գիրքեր, որոնց շարքին կան քանի մը հասոյ որոնց մէջ կը հանդիպինք հայատառ գիրքերու, ինչպէս Gallica, GoogleBooks, EANC, digilib, Ac.Sci.Arm..., մասնաւորաբար գրաբար կամ հին մատեաններու: Այս ձեւով կրնանք կորուստէն փրկել մեր մատեանները ու մատչելի դարձնել բոլոր ցանցորդներու¹²:

ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ Ֆիլիփ

(7-12/2010) Մաղն-լա-Վալէյի Հայ Սշակութային Տան Տեղեկագիր, 22^{րդ} տարի, թիւ 75-76, էջ 10, *Նու-ազի-Լը-Կդան* [հատուածներ]

⁸ Լսատեսողական = audiovisuel.

⁹ Օրէնսդրութիւն = législation.

¹⁰ Հասարակած ստացուածք = domaine public.

¹¹ Հպահանել = scanner.

¹² Ցանցորդ = internaute.

BTS Groupe 1 des LVE		Session 2012
Arménien	Code : LVE 1 ARM	Page : 3/6

ARMÉNIEN ORIENTAL

TEXTE

Թվայնացված¹³ հայերեն գրքեր համացանցում

[...] Ներկայիս դեռևս առկա են հայերեն գրողներ, սակայն ընթերցողների թիվը զգալիորեն նվազել է: Չնայած նրան, որ տպագրական ճարտարարվեստը բավականին կատարելագործվել է, այնուամենայնիվ, մենք՝ հայերս երբեք չենք օգտվում այդ առաջընթացից: Շատեր ավելորդ են համարում իրենց հայերեն գրությունները տպագրության հանձնել: Ընդհանրապես լույս տեսնող մի հայատառ գրքի տպաքանակը 600-ը չի գերազանցում ու նրանց մեծ մասը նկուղներում փձանում են: Ելրոպայում և Խաղաղական Ովկիանոսի անդի ամիին առկա են մատենասեր մարդիկ, ովքեր սիրով կուզենային ձեռքբերել՝ Բեյրութում, Հալեպում, Պոլսում կամ Թեհրանում լույս տեսնող գրքերը, սակայն նրանց ցուցակները չունեն և առաքման ծախսերի պատճառով վարանում են պատվիրել:

Այս դեպքում անելանելի վիճակից դուրս բերող միակ արահետը՝ համացանցն է: Հեղինակը կարող է իր գիրքը տեղադրել մի կայքէջում և այն աշխարհասփյուռ ընթերցողներին հասանելի դարձնել: Այնչափ ցանկալի է ունենալ կենտրոնացված մի կայք, որը իր մեջ կպարփակի հղումներ¹⁴ տարբեր հայատառ ցանցային գրատներից: [...]

Ներկա դարում օտարալեզու թվայնացված գրքերի թվաքանակը գնալով աճում է՝ թե՛ համացանցում, թե՛ խտասալիկում¹⁵: Այդ գրքերը կարելի է ընթերցել թե՛ համակարգիչի պաստառից¹⁶, թե՛ մասնավոր հպազգած տախտակների¹⁷ միջոցով որոնց տեսականին օրեց օր բազմանում է (iPad, TachPad, Sony Dash, Archos...): [...]

Ֆրանսիայում արդեն իսկ գործում են թվայնացված մի քանի ցանցադարասի¹⁸. Numilog (Hachette), Eden Livres (Flammarion, Gallimard...), ePlatform (Editis, Michelin...): Նորություն համացանցի մեծ վաճառատունը, FNAC, 15 Նոյեմբերին հրապարակ է հանում նրա ընթերցիչը¹⁹՝ FnacBook (վաճառվում է 199 եվրո փոխարժեքով, անվճար 50 գիրք): Նրանց կայքից հնարավոր է մոտ 80 000 թվայնացված գիրք գնել 20-30 տոկոսով ավելի էժան քան թղթինը: Վերջին տվյալների համաձայն, գրքերի թվայնացման համար, Google-ը մի համաձայնագիր է կնքել Hachette-ի հետ :

Մինչ այժմ խոսքը վերաբերում էր նոր գրքերին՝ լինեն դրանք անվճար կամ

¹³ Թվայնացնել = numériser.

¹⁴ Հղում = lien.

¹⁵ Խտասալիկ = cédérom.

¹⁶ Պաստառ = écran.

¹⁷ Հպազգած տախտակ = tablette tactile.

¹⁸ Ցանցադարասի = plateforme.

¹⁹ Ընթերցիչ = liseuse.

վճարովի: Անշուշտ չպետք է անտեսել հնատիպ մատյանները: Նախ անհրաժեշտ է հիշեցնել, թե ցանկացած մարդ, առանց հեղինակի թույլտվության, իրավունք չունի գիրք հրատարակել՝ լինի այն թղթե կամ լսատեսողական²⁰ տարբերակով: Օրենսդրությունը²¹ երկրից երկիր տարբերվում է: Ֆրանսիայում՝ մի հեղինակի մահից 70 տարի ետք միայն նրա ստեղծագործությունները դառնում են հասարակության ստացվածք²²: Ներկայիս գործում են բազմաթիվ կայքեր, որտեղ հնարավոր է գտնել հպահանված²³ կամ թվայնացված գրքերի, որոնց շարքերում հանդիպում ենք մի քանի հայատառ գրքերի, ինչպես՝ Gallica, GoogleBooks, EANC, digilib, Ac.Sci.Arm..., մասնավորաբար զրաբար կամ հին մատյանների: Այս կերպ կարող ենք կորստից փրկել մեր մատյաններն ու մատչելի դարձնել այն բոլոր ցանցորդներին²⁴:

ՓԻԼԻԲՈՍՅԱՆ Ֆիլիպ

(7-12/2010) Մադն-լա-Վալեյի Հայ Մշակութային Տան Տեղեկագիր, 22^{րդ} տարի, թիվ 75-76, էջ 10, Նու-ազի-լը-Կդան [հատվածներ]

²⁰ Լսատեսողական = audiovisuel.

²¹ Օրենսդրություն = législation.

²² Հասարակության ստացվածք = domaine public.

²³ Հպահանել = scanner.

²⁴ Ցանցորդ = internaute.

TRAVAIL À FAIRE

I – Compréhension (notée sur 10 points) :

Rédiger en français un compte-rendu du texte en mettant en évidence les idées-clés (150 mots \pm 10%).

II – Expression (notée sur 10 points) :

Répondez en arménien à deux questions au choix parmi les trois questions suivantes.

1. À votre avis, dans quelle mesure l'usage d'outils informatiques de plus en plus sophistiqués a-t-il modifié le travail dans votre secteur d'activité ? (150 mots \pm 10%.)
2. Selon vous, quels moyens technologiques devraient encore se développer dans votre secteur d'activité et avec quels objectifs ? (150 mots \pm 10%.)
3. Si vous estimez que, dans votre secteur d'activité, vous devrez vous tenir à jour sur le développement des nouvelles technologies, expliquez pourquoi et précisez comment vous comptez vous y prendre. Dans le cas contraire, quel type de formation continue votre métier requerra-t-il et comment projetez-vous de l'acquérir ? (150 mots \pm 10%.)

BTS Groupe 1 des LVE		Session 2012
Arménien	Code : LVE 1 ARM	Page : 6/6